Twenty-Five Years of Waiting: Mothers of Missing Soldiers Demand Peace

Available only in Armenian

Author: Lusine Voskanyan

04.04.2017

Քառորդդարյա սպասում. Անհետ կորած զինվորների մայրերը խաղաղություն են պահանջում

Հեղինակ՝ Լուսինե Ոսկանյան

Տառապանքն ազգություն չի ճանաչում. Վերա Գրիգորյանի պատմությունը

Վերա Գրիգորյանը

Ստեփանակերտի սրտում գործում է փոքրիկ թանգարան՝ նվիրված Արցախյան պատերազմում անհայտ կորած ազատամարտիկներին: Նախկինում այստեղ գործել է հեռուստատեսություն: Պատերազմի տարիներին այն արկակոծվել է և ավերվել: 1997 թվականից կառույցում գործում է «Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միություն» հասարակական կազմակերպությունը, որի հիմնադիրը Վերա Գրիգորյանն է: Նա հրավիրում է մեզ շրջելու թանգարանի գլխավոր ցուցասրահում, ապա ուղեկցում փոքրիկ սենյակ: Դրա անկյունում դրված են անձնական իրեր ու լուսանկարներ: Դրանցից մեկում նորապսակ զույգ է: Փեսան կամավորի հագուստով է: Տիկին Վերան համառոտ ներկայացնում է երիտասարդին և արագ դուրս գալիս սենյակից: Իրերը պատկանում են Սպարտակ Գրիգորյանին՝ Վերա Գրիգորյանի որդուն, որի ճակատագիրն անհայտ է արդեն 23 տարի:

Տիկին Վերան բավական գործնական է և առաջարկում է միանգամից անցնել զրույցին: Խոսում է անթերի գրական հայերենով, սակայն հուզվելիս կամ ոգևորվելիս անցնում է Արցախի բարբառին: Նա հիշում է 30 տարի առաջ տեղի ունեցած իրադարձությունների յուրաքանչյուր մանրուք, կարծես դրանք երեկ են եղել: Արցախյան շարժման բուռն տարիներին Վերա Գրիգորյանն ապրում էր Ստեփանակերտում, աշխատում տեղի համալսարանում որպես մեքենագրուհի, ուներ երկու զավակ՝ որդի և դուստր: 1988 թ. հունվարին սկսվում են առաջին ցույցերը, իսկ Սումգայիթի ջարդերից հետո՝ սաստկանում: Ստեփանակերտցիներն անգամ եռագույն դրոշ չունեին: Սովորական վզկապները միացնում էին իրար ու դրոշ սարքում: «Մեր մտքով չէր անցնում, որ այդ ամենը նման ընթացք կստանա: Չէինք պատկերացնում, որ բռնություններ կլինեն, հետո էլ պատերազմ կսկսվի»: Հետագայում սկիզբ առան ռմբակոծությունները և արկակոծությունները: Ամեն 20 րոպեն մեկ գրադով կրակում էին Ստեփանակերտի վրա: Մարդիկ օրերով նկուղներից դուրս չէին գալիս: Յուրաքանչյուր քաղաքացի պաշտպանում էր իր թաղամասը: Սպարտակ Գրիգորյանը նախ միացավ Աշոտ Ղուլյանի ջոկատին, հետո դարձավ հրետանավոր, ի վերջո, մտավ միլիցիայի շարքերը: Ընդամենը 3 ամիս անց որդուն տանում են առաջնագիծ՝ Ֆիզուլի. «Մի օր ականջիս հասավ, որ

միլիցիոներներ են զոհվել, մի մասն էլ անհայտ կորել է: Եկող չկա: Լուր չկա: Միլիցիայի ջոկատը և Երևանի հատուկ ջոկատայիններն ամբողջ երկայնքով եղել են առաջնագծում: Ֆիզուլիում կռիվը շատ երկար է շարունակվել: Հարցուփորձ արեցինք՝ ով է անհայտ կորել: Պատասխանեցին՝ Սպարտակ Գրիգորյան: Արդեն ես ընկա: Դմփոցս եմ լսել,- տիկին Վերան մի պահ լռում է:- Համալսարանում էի: Կորչի էդ օրը: Հավասարակշռությունս չկարողացա պահել: Չգիտեմ՝ ինչ էր ինձ հետ կատարվում: Աչքերս բացեցի հոսպիտալում: Հիշում եմ ահավոր ծանր հոտ. նաշադիր էին դրել, որ գիտակցության գամ»:

Դեպքը տեղի է ունեցել 1994 թ. հունվարի 16-ին: Խրամատում 4 հոգի են եղել, երկուսը փրկվել են, երկուսը՝ ոչ: Սպարտակն ամուսնացած էր, երեխաներ չուներ: Սկսվում է անվերջ սպասման փուլը: «Էս աշխարհում այդ մի տղան ունեմ՝ անհայտ կորած, մի աղջիկ ունեմ ու երեք թոռ: Թոռներս գեղեցիկ են: Տղա թոռս Սպարտակից շատ գծեր է վերցրել: Տիպիկ Սպարտակի բնավորությունն է՝ մաքրասիրությունը, արդարությունը, ազնվությունը, խաղաղասիրությունը»:

5 տարի անց, երբ որդու կինը որոշեց նոր ընտանիք կազմել, տիկին Վերան ամեն կերպ աջակցեց նրան, իսկ այժմ նա առանձնահատուկ հպարտություն է զգում հարսի երեխաների համար. «Հիմա երեք երեխա ունի: Հաճախ ենք տեսնվում: Հարսիս երեխաներն այնքան խելացի են, որ Հայաստանում ու Արցախում բոլորը մատով են ցույց տալիս: Ամուսինն էլ շատ լավն է, խելոք, քարտաշ է»:

Որոնումների առաջին տարիներին տիկին Վերան, ինչպես և շատ այլ մայրեր, պարբերաբար գնում էր ՆԳՆ, Ազգային ավտանգություն, Կարմիր խաչ. «Գիշերները էնտեղ էինք լուսացնում, բորդյուրների վրա: Սոխ, պանիր, հաց էինք տանում: Պետք է կարողանալ, չէ՞, կենդանի մնալ, որոշել հետագա անելիքները: Ամենից շատ մենք էինք գնում-գալիս»,- պատմում է նա: 1994 թվականը դեռ չէր ավարտվել, իսկ Վերա Գրիգորյանը հասցրել էր շատ վայրեր գնալ տղային փնտրելու համար: Բազմիցս լինում էր Նախջևանիկ և Սադախլու գյուղերում. «1997 թվականին որոնումներն ինձ տարան մինչև Նովոսիբիրսկ: Ադրբեջանցու պետք է հանդիպեի: Ուշացել էի: Գիշերը մնացի էնտեղ՝ օդանավակայանում: Մի կին մաքրում էր սրահը: Օգնեցի նրան: Ամբողջ գիշերն աշխատեցի, լվացի ամեն ինչ՝ զուգարան, միջանցք, ամեն ինչ: Այդ կինն առաջարկեց գնալ իրենց տուն, թե

գոնե տաք ջուր կտա: Դե, մնայի գիշերը օդանավակայանում՝ ի՞նչ անեի: Նրա տանը ադրբեջանցու «կանալին» զանգեցինք: Ինձ պատասխանեցին, թե մի քանի ժամ սպասել են, չեկա, իրենք էլ հեռացան: Յարոսլավի շրջանում էին, Պերեսլավլ քաղաքում: Մեկնեցի Մոսկվա, էնտեղից՝ գնացքով այդ քաղաք: Մի շաբաթ տևեցին բանակցությունները: Ադրբեջանցիներին գտա, բայց ոչինչ չստացվեց»:

Արցախ վերադառնալուց հետո ուրիշների հարազատների հետ որոշում է մի միություն ստեղծել, որպեսզի անհրաժեշտ պահին իրար սատար կանգնեն. «Մենք որոշեցինք ստեղծել մի կառույց, որը կմիավորի և՛ մայրերին, և՛ եղբայրներին, և՛ հայրերին, և՛ քույրերին, և՛ դուստրերին, և՛ որդիներին: Երբ որոշում էինք նախագահին, ինձ ընտրեցին: Համաձայնվելը շատ դժվար էր, որովհետև խիղճը առաջնահերթ պետք է դառնա, պետք է նվիրվես, մաքուր աշխատես»: Տիկին Վերան կարծում է, որ հատկապես անհայտ կորածների հարազատների ցավը ծանր է. «Մեր վերքը բաց է ու չի չորանում: Զոհվածինը ուրիշ է, անհայտինը՝ ուրիշ: Նմանություն կա, որ չկան, բայց նրանք առավել են մեզնից նրանով, որ վերջակետը տեսել են, ծաղիկ են տանում զոհված օրը, ծնված օրը, հաղթանակի օրը, անկախության օրը: Բա մենք ո՞ւր գնանք: Ստիպված գալիս ենք էստեղ՝ թանգարան»:

Վերա Գրիգորյանն անձամբ շրջել է Արցախի բոլոր շրջաններում և հավաքել տվյալներ անհայտ կորածների ու նրանց ընտանիքների վերաբերյալ: Անհայտ կորածներից ամեն մեկի համար այսօր նախատեսված է առանձին թղթապանակ: Կան թղթապանակներ ընտանիքների վերաբերյալ՝ կանանց, մայրերի, հայրերի, երեխաների: Միության ջանքերով տարվա ընթացքում բազմաթիվ ծրագրեր և միջոցառումներ են իրականացվում ընտանիքներին աջակցելու համար: Առանձին ուշադրություն է դարձվում սոցիալապես անապահով և քրոնիկական հիվանդ ունեցող ընտանիքներին: Սրտի վիրահատության անհրաժեշտության դեպքում տիկին Վերայի միջնորդությամբ Պաշտպանության բանակը 3 մլն դրամ է հատկացնում: Երեխաների և թոռների համար հաճախ միջոցառումներ են կազմակերպվում: Այս տարի ամանորյա հանդեսին մասնակցել է 66 երեխա: Միությունն ամեն տարի հայտարարում է շարադրության մրցույթ կրթական հաստատություններում:

Երբեմն վիճաբանություններից խուսափել հնարավոր չէ. «Ինչքան ուզում ես լավ աշխատիր, ինչ ուզում ես արա, մի դժգոհություն, մեկ է, լինում է: Եթե ինչ-որ բան այնպես չի անցնում՝ չեմ կարողանում քնել, տրամադրությունս ընկնում է: Ահավոր վատ բնավորություն ունեմ, մտածում եմ ՝ խե պիտի ինձնից նեղանան: Հետո էլ մտածում եմ ՝ աա, նըղացալ ես, գնա սառը ջուր խմի, հանգստացի: Պա, ես հի՞նչ անիմ: Պա, ես հաշվում եմ, որ իմ խոխեքս են»:

Տիկին Վերան չի սահմանափակվում հասարակական ակտիվ գործունեությամբ, նաև գրում է, 19 գրքի հեղինակ է: «Հոգնած հույս», «Պողը լեզվի», «Հույսի առագաստներ», «Փարիզյան օրագիր», «Եվ դարից ձգվում է տունդարձի օրը», «Հույսի առագաստներ», «Անհայտ ճակատագրեր. ահագնացող տագնապ», «Կինն ընդդեմ պատերազմի և բռնության», «Տառապանքն ազգություն չի ճանաչում». բոլոր գրքերը գրել է որդու անհետանալուց հետո: «Ամեն անգամ ադրբեջանցիների հետ էի հանդիպում, էստեղ-էնտեղ էի ման գալիս, գալիս էի տուն ու հետս պատահածը կոնսպեկտի նման գրանցում տետրումս: Այդպես սկսեցի գրել: Մի անգամ էլ գնացել էի Սպարտակի համար, ուրիշ տղայի տեղ ասացին: Էդ ուրիշ տղային բերել ենք: Իմ Սպարտակի անունը տվեցինք, իսկ իրենք էս տղայի անունը տվեցին: Մի շատ գեղեցիկ, կուկլա տղա է: Տեսեք՝ ինչ սիրուն տղա եմ հետ բերել»,- ասում է տիկին Վերան՝ ցույց տալով լուսանկարը:

Տիկին Վերայի համար հերթական փորձությունը ապրիլյան քառօրյա պատերազմն էր: Ապրիլի 2-ին արդեն գիտեին, որ նոր հարձակում է տեղի ունեցել. «Միությունում հավաքվել էին մեր մայրերը, կանայք: Ճիշտն ասած, նրանք, ովքեր կատաղած են, «բոևիկ» են: Ուզում են թե մազերս պոկեն, ասում են՝ մենք էլ ենք գնում ճակատ: Ամուսինս, որ 2-րդ կարգի հաշմանդամ է, վեր էր կացել, ասում էր՝ գնում եմ: Ասում եմ՝ հիվանդ ես, ո՞ւր ես գնում: Ասում է՝ գնում եմ օգնեմ: Ասացի՝ դու ո՞ւր ես գնում: Եթե գրվելու է, ես կգնամ: Դու մնա»: Ապրիլի 12-ին տիկին Վերան այլ կանանց հետ օգնություն է հասցնում դիրքեր՝ գուլպաներ, կերակուր, հիգիենայի պարագաներ: «Ապրիլի 20-ին տեղեկություն եկավ, որ 16 հոգի անհայտ կորած է: Կարմիր խաչի ու այլ կառույցների միջոցով մարմինների փոխանակում տեղի ունեցավ: Դիակները խոշտանգված էին: Անգլուխ մարմիններ էին: Մեկի ձեռքը չկար, մեկի ոտքը չկար,- հոգոց է հանում:- Օրեր անց մի կին զանգեց. որդու

մարմինը նոր էին ուղարկել: Ասում եմ՝ մատաղ անիմ, խոնարհվում եմ, ցավակցում եմ: Ինքը վրաս գոռգռում էր: Պատմեց, որ իր տղան հագնում է 41 չափսի կոշիկ: Դագաղը բացել են, տեսել 37 չափսի ոտքեր: Գլուխը չկա: «Դա իմ տղայի դիակը չէ: Բերում եմ ձեր նախագահականի առաջ շպրտեմ»: Ասացի՝ քույրիկ, գոռալով, գոչելով ոչ մի բանի չես հասնի, կարող է սխալմամբ ուրիշ դիակ են բերել, բայց բոլորին գտել են, Եռաբլուրում են հուղարկավորում բոլորին, բայց լսի՛ր ինձ, դու մի՛ բեր, ինքս կգամ կվերցնեմ այդ մարմինը, կտանեմ, կթաղեմ, վրան կգրեմ՝ Գրիգորյան Սպարտակ, միայն թե ողջ կյանքս չսպասեմ, դե, դու ողջ կյանքդ սպասիր: Էլ բան չասաց»:

Վերա Գրիգորյանը որոնողական աշխատանքների ընթացքում հաճախ է հանդիպում բախտակից մայրերի Ադրբեջանից և Հայաստանից. «Քանի անգամ հանդիպել եմ ադրբեջանցի համանման հայրերի ու մայրերի հետ, նրանք էլ են համարյա մեզ նման մտածում: Ասում են՝ կորչի պատերազմը, ի՞նչ անենք, մեր տղաներին տանում են ու սկի էլ հետ չեն բերում: Գերությունից ազատվելիս հայ տղաներին իշխանությունները միանգամից հանձնում են ընտանիքներին: Իսկ ադրբեջանցիներն այդպես չեն անում: Մի քանի ամիս պահում են զնդաններում, հետո տիրոջ վրա ծախում: Տառապանքն ազգություն չի ճանաչում»:

Պատին փակցված պաստառներից մեկում ադրբեջանցի, հայաստանցի և արցախցի մայրեր են նկարված՝ գլխաշորով: Նրանց սրտով փշալարեր են անցնում. «Ամենաանսահմանը մոր վիշտն է: Մայր է, էլի՝ ադրբեջանցի լինի, չեչեն լինի, հայ, թուրք: Մայր է, չէ՞, 9 ամիս փորում պահում է, հետո ցավ քաշելով ծնում, պահում- մեծացնում, տալիս բանակին: Նրանք էլ են մեզ հետ համաձայն, որ պատերազմին վերջ դրվի: Բայց վախենում են, որովհետև իրենց ղեկավարը դահիճ է: Իսկ մենք սովորական մահկանացուներ չենք: Մենք կենդանի դիակներ ենք: Մենք աղաչում ենք, պաղատում ենք, պահանջում ենք խաղաղություն և մեր երկրի ազատությունն ենք ուզում: Անկախություն ենք ուզում: Պետք է, չէ՞, լինի մի պոռթկում: Բայց սա որոշ մարդկանց ձեռնտու է կարծես»:

Տիկին Վերան հակամարտության լուծման իր բանաձևն ունի. «Կինը ժայռեր կշրջի: Մայրերը, կատաղած մայրերը: Եթե աշխարհի բոլոր կանայք միանան՝ կկարողանան խաղաղության հասնել բոլոր կողմերից: Միակողմանի չի լինի:

Իրենք մեզ են սպանում, մենք՝ իրենց: Ախր, նախագահները հանդիպում են, հոգևոր առաջնորդները հանդիպում են, լրագրողները հանդիպում են, սպեկուլյանտները հանդիպում են, մարզիկները հանդիպում են: Տակին ի՞նչ է մնում, անմեղ զինվորնե՞րը: Երկու կողմից տանում են ու կոտորում: Էդ զինվորը ինքնակա՞մ է գալիս մեզ վրա հարձակվում: Չէ՛»: Այս տարիների ընթացքում մի բան կա, որ Վերա Գրիգորյանին հանգիստ չի տալիս: Ըստ նրա՝ անհայտ կորած ազատամարտիկների գործը գնահատված չէ պետության կողմից. «Առաջնագծում, կրակի թոհուբուհում անհայտ կորածները հայրենիքի նվիրյալներ են: Պահանջում ենք՝ ստուգե՛ք արխիվները, ովքեր մարտական դիրքի առաջին գծում են անհայտ կորել, գնահատե՛ք: Հայրենիքի օրենքը պետք է հավասար լինի բոլորի համար: Բայց չենք տեսնում դա: Առայսօր ոչ մեկս ոչ մի բան չունի: Երբ խոսում են զոհվածների մասին, մեր տղաներին համարում են զոհված: Երբ ասում են Մայիսի 9 կամ Անկախության օր, ասում են՝ ձերոնք ողջ են, գալու են: Գիտե՞ք, թե դա որքան վիրավորական է: Հուսով եմ, որ օրենքի մեջ փոփոխություններ կմտցնեն: Տղաս հայրենիքի համար է գնացել, բայց հայրենիքը չի գնահատում: Դժվար է դա, շատ դժվար,- ձայնը երերում է, սկսում է լաց լինել: Տիկին Վերան շատ արագ շտկում է իրեն. արցունքները հոսում են, բայց ձայնն արդեն երկաթյա հստակություն ունի. «Ամեն անգամ զինվորների մոտ գնալիս մտածում ենք, որ մեր տղաներին ենք տեսնում, մեր բալիկներին: Ես իմ պայքարից չեմ հոգնում: Այսպես էլ կմահանամ: Դեպի առաջ եմ նայում: Սա պարզապես պայքար չէ. ես լավ բանի եմ սպասում»,- զրույցն ամփոփում է նա:

Գրկում ենք Վերա Գրիգորյանին ու հրաժեշտ տալիս: Դռան մոտից հետ ենք նայում. տիկին Վերան հեռացել է, իսկ աշխատասենյակից լսվում են նրա գործնական կարգադրությունները:

Քառորդդարյա սպասում. 3 օր, որ վերածվեց 25 տարվա սպասման. Ռիմա Առաքելյանի պատմությունը

Ռիմա Առաքելյանը

«Վերջին անգամ ռազմաճակատ մեկնելուց առաջ արդեն հրաժեշտ էր տվել: Երբ հետ դարձավ աստիճաններից ու փոքրիկին մեկ անգամ էլ համբուրեց, ասաց՝ 3 օրից կգամ, բայց այդ 3 օրը տևում է արդեն 25 տարի»:

«Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների խորհուրդ» ՀԿ-ի նախագահ Ռիմա Առաքելյանի համար սա վերջին հիշողությունն է որդուց՝ Շահեն

Առաքելյանից: Արցախյան պատերազմի ազատամարտիկն «Արաբո» ջոկատից էր և անհայտ կորել է 1992 թվականի հունիսին: Տիկին Ռիմայի խոսքով՝ ջոկատի բոլոր անդամներն էլ յուրահատուկ անհատականություններ էին՝ կայացած և կրթված: Նա պատմում է, որ մինչև պատերազմը որդին գործի բերումով շատ էր լինում Ստեփանակերտում. «Բաքվի ջարդերի ժամանակ նա փռի ամենալավ հացերը մատակարարում էր փախստականներին: Ամեն ինչով օգնում էր: Երեխաներին շատ էր սիրում: Նրանց էլ էր օգնում: Ես Ստեփանակերտի հետ մինչև այժմ էլ շատ կապված եմ, որովհետև տղաս շատ էր այնտեղ լինում»: Երբ Ծահեն Առաքելյանն անհետացավ, նրա դուստրը՝ Աննան, վեց ամսական էր: Նա բարձրագույն կրթություն ունի և արդեն աշխատում է: Հետագա տարիներին Ռիմա Առաքելյանն իրեն նվիրում է ռազմագերիների և նրանց հարազատների խնդիրների լուծման աշխատանքներին: 15 տարի նա լավատեսորեն սպասել է որևէ լուրի որդու մասին: 2008 թվականին համացանցում հայտնվեց տեսանյութ, որում երևացին «Արաբո» ջոկատի զինվորների մարմինները: Շատերը, այդ թվում՝ Ռիմա Առաքելյանը, տեսան իրենց հարազատներին: Տեսագրության իսկությունը հաստատվել է: «Առաջ այնքան լուսավոր էր հույսը, որ նա դեռ կենդանի է: Հիմա խավարում է խարխափում այդ հույսը: Երևի այս աշխատանքն ինձ օգնեց, որ մնացի ոտքի վրա այդ տեսանյութը տեսնելուց հետո, նույնիսկ՝ գործել»,- ասում է Ռ. Առաքելյանը: Նա ընդգծում է՝ քանի դեռ անհայտ կորածների ճակատագրերը պարզված չեն, քանի դեռ նրանց մասունքները չեն վերադարձվել, իրենք շարունակելու են պայքարել: Որոնումների գործընթացը ակտիվ փուլում է: Խնդրով զբաղվում են ՆԳՆ-ն, ԱԱԾ-ն, Գերիների, պատանդների և անհայտ կորածների հարցերի հանձնաժողովը: Միակ խոչընդոտը Ադրբեջանի վարած քաղաքականությունն է: Այս տարիների ընթացքում բազմիցս հանդիպումներ են եղել նույն խնդրով զբաղվող ադրբեջանական ՀԿ-ների և անհատների հետ: Սակայն նրանց հետ բանակցություններ վարելը գրեթե անհնար է: Ցանկացած հարցում նրանք դիվանագիտական խաղեր են սկսում և առաջ քաշում «20 տոկոս հողերի» հարցը. «Մենք նրանց ասել ենք՝ մեր իշխանությունները պատրաստ են համագործակցել գերիների փոխանակման հարցով: Մենք հանդիպել ենք և՛ Բելգիայում, և՛ Ժնևում, բայց նրանց ՀԿ-ի ղեկավարն ինձ պես մի գեղջուկ մայր չէր՝ երեխան կորցրած, նա Միլլի մեջլիսի պատգամավորի կին էր: Ես հենց այնտեղ

ասացի՝ դուք չեք կարող այդ բանն անել, չեք համաձայնում, որովհետև ձեր ամուսնուն Ալիևը դուրս կշպրտի: Իսկ եթե մայր լիներ և նրանց երկիրն էլ մեր պետության նման լիներ, իրավիճակն այլ կլիներ: Բայց նրանց համար մարդը կարծես արժեք չունի»:

Տիկին Ռիման պատմում է, որ պաշտոնական հանդիպումների ընթացքում նշմարվում էին հաջողություններ: Ադրբեջանի և հայկական պատվիրակությունների անդամները գոնե սկսում էին իրար հետ շփվել: Սակայն հույս չունի, որ համանման հանդիպումներ նորից տեղի կունենան. «Վերջին հանդիպման ժամանակ նրանց կազմակերպության ղեկավարը եկել էր իր տղայի հետ: Կարծես էքսկուրսիայի էր եկել: Նա պիտի անհայտ կորած ունենար, որ սիրտը մղկտար, որ շահագրգռված լիներ: Դե, իրեն ի՞նչ: Իր տղային բերել, ցույց էր տալիս ամեն ինչ, ծանոթացնում սենատի անդամների հետ»:

Շատ տեղեկություններ փոխանակվում են ժողովրդական խողովակներով. «Սկզբնական շրջանում եղել է այնպես, որ հանդիպել եմ ինձ բախտակից ադրբեջանցի ծնողների: Նման մի հանդիպում եղել է Թբիլիսիում: Մի անհայտ կորածի հայր էր, անունը Համլետ Բադալով էր: Ես անընդհատ խոսում էի անհայտի մայր Թամար Այուբովնայի հետ, որը շատ զարգացած կին էր: Որոշ բաներում, երբ տարակուսում էր, Բադալովը միջամտում էր՝ «Алиев с тебя шкуру снимет»: Իսկ ես ազատ էի իմ խոսակցությունների մեջ՝ իհարկե պաշտպանելով իմ հայրենիքը: Ով ինչ ասի, ես առաջին հերթին մայր եմ»,- ասում է Ռիմա Առաքելյանը: Նա նշում է՝ եթե Ադրբեջանի նախագահը առաջադեմ գաղափարների հարեր, վաղուց արդեն նման հարց չէր լինի. «Ի՞նչ է նշանակում XXI դարում որդուդ փնտրես գերության մեջ: Թվում է, թե քարե դարում ես, որ էդ մարդիկ զնդաններում են պահվում: Ես և ԼՂՀ-ից Վերա Գրիգորյանը մի գերի փոխանակելու բախտ ունեցանք: Տեսա՝ ինչ առույգ, ինչ հագած-կապած ադրբեջանցու փոխանակեցինք: Մոտեցա տղային: Հարցրի՝ որ գնաս, կասե՞ս, որ քեզ հետ այստեղ այսքան լավ են վարվել, որպեսզի մերոնց էլ այնտեղ այդպես լավ նայեն: Ասում է՝ ուզում եք ինձ դավաճա՞ն համարեն: Լավ, մենք մարդ չե՞նք, ո՞նց է, որ ձեզ էդքան լավ պահել ենք: Ուղղակի մենք ավելի մարդասեր ենք: Նորմերը պահպանում ենք: Մեզ մոտ դեռ պատերազմի տարիներին էր այդպես: Իրենք մեկը միշտ փոխանակել են ավելի

շատով: Իրենց կեղտոտ դիվանագիտական խաղերն են խաղացել, հետագայում կտեսնենք, որ նրանք ծիծաղելի իրավիճակի մեջ կհայտնվեն»:

Այնուհանդերձ նա հույսը չի կորցնում, որ կվերադարձնեն տղաներին: Իսկ մինչ այդ հոգ է տանում անհայտ կորածների հարազատների մասին: Հատկապես ուշադրություն են դարձնում մարզերում ապրող ընտանիքներին: Ցուցաբերվում է բժշկական և ֆինանսական օգնություն: Եթե որևէ մեկը վիրահատության կարիք է ունենում, ՀԿ-ն միջնորդում է, որ այն լինի անվճար: Ծատերին ուղարկում են հանգստյան տներ: Գործունեությունը չի սահմանափակվում միայն անհայտ կորածների ընտանիքների աջակցությամբ: Անում են այն ամենը, ինչ կապված է հակամարտության հետ:

Սակայն ՀԿ-ի ղեկավարն ամենակարևորը համարում է կենդանի շփումը, միմյանց աջակցելը, գրկախառնությունը և այս գործունեությունն էլ իր առաքելությունն է համարում. «Նրանց հետ չեմ ձանձրանում: Ես տանը ձանձրանում եմ, բայց ոչ նրանց հետ: Թեև շատ դժվար է: Հիմա ծնողները մեծացել են, այրիների հոգսերը շատացել են: Բայց ես չեմ հոգնում և կարողանում եմ աշխատել նրանց հետ: Ես հռետոր չեմ, բայց լավ կազմակերպիչ եմ, ինչ-որ բանով ուզում եմ փոխհատուցել տղաներին, ի՛մ տղային»: Ռիմա Առաքելյանը երազում է այն օրվա մասին, երբ խաղաղություն կհաստատվի. «Երևի կերկարի հակամարտությունը, բայց ամեն ինչ իր վերջն ունի: Միջազգային ասպարեզում ադրբեջանցիները շատ խորամանկ են խաղում: Ես աղոթում եմ, որ ի վնաս մեզ որոշում չկայացնեն ու չպարտադրեն մեզ այդ որոշումը: Մենք ոչ մի կտոր հող չունենք նրանց տալու: Մենք էլ կգնանք տղաներին կօգնենք պատերազմում, եթե հարկ լինի»: Հ. Գ. Արցախյան պատերազմի տարիներին անհայտ կորել է ավելի քան 1000 քաղաքացի ԼՂՀ-ից և ՀՀ-ից:

Լուսանկարները՝ Արփի Բալյանի